

3414

Ի. ՍՏԱԼԻՆ

ՃԱՌ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆՆԵՐԻ
ՈՍՈՐՏՄԱՆ ԱՌԹԻՎ

3K33

Ե-33

ԿՈՄՍՈՎՅԱՆԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1935





N. Coanuy

3K33 *ար.* 24 JUN 2005
 Ժ-33 Պրոֆեսարներ բոլոր յերկրների, միացե՛ք!

20 NOV 2009

Ի. ՍՏԱԼԻՆ

Ձ

ԱՌ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ
 ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆՆԵՐԻ
 ԱՎԱՐՏՄԱՆ ԱՌԹԻՎ

Արժանացած Գեղեցիկ պալատում
 1935 թ. մայիսի 4-ին

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
 ՑԵՐԵՎԱՆ • 1935

Պատ. խմբ. Նս. Մակիեց
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Արբազրիչ Լ. Աբովյան

Կուսհրատի տպարան
Գլավլիտ С—47, պատվեր № 162
Հրատ. 268, տիրաժ 10,000

И. СТАЛИН
РЕЧЬ НА ВЫПУСКЕ АКАДЕМИКОВ
КРАСНОЙ АРМИИ

Произнесенная в Кремлевском дворце

4 мая 1935 года

Партиздат, Эривань

4773
39

Ընկերներ. չի կարելի ժխտել,
վոր վերջին ժամանակներս մենք մեծ
հաջողություններ ենք ունեցել ինչ-
պես շինարարության, այնպես էլ
կառավարման բնագավառում: Այդ
կապակցությամբ մեզ մոտ չափա-
զանց շատ են խոսում ղեկավարների
մատուցած ծառայությունների մա-
սին, առաջնորդների ծառայություն-
ների մասին. նրանց են վերագրում մեր
բոլոր, համարյա բոլոր նվաճումները:

Այդ, իհարկէ, ճիշտ չէ և անաղ է:
Բանը միայն առաջնորդներն էին չէ:
Բայց դրա մասին չէ, վրդ կուզեյի
խոսել այսօր: Յես կուզենայի մի-
քանի խոսք ասել կադրերի մասին,
ընդհանրապէս մեր կադրերի և մաս-
նաւորապէս մեր կարմիր բանակի
կադրերի մասին: Դուք գիտեք, վրդ
մենք հին ժամանակից ժառանգու-
թյուն ստացանք տեխնիկապէս հե-
տամնաց ու կիսադժատ, քայքայված
մի յերկիր: Չորս տարւա իմպերիա-
լիստական պատերազմից քայքայ-
ված, յերեք տարւա քաղաքա-
ցիական պատերազմից կրկին քայ-
քայված մի յերկիր՝ կիսադրագետ
ազգաբնակչությամբ, ցածր տեխնի-
կայով, արդյունաբերության առան-
ձին տաղիսներով, վրդոնք ընկղմած

եյին մանրագույն դժուարացիական
տնտեսութիւններն էին — ահա
ինչպիսի յերկիր ժառանգեցինք մենք
անցյալից: Մեր խնդիրն էր այդ յեր-
կիրը միջնադարի ու իսպարի ուն-
սերից փոխադրել ժամանակակից ին-
դուստրիայի և մեքենայացված դժու-
րատնտեսության ունեւերի վրա: Ինչ-
պէս տեսնում եք՝ խնդիրը լուրջ էր
և դժվարին: Հարցն այսպէս էր
դրված՝ կամ կլուծենք մենք այդ
խնդիրն ամենակարճ ժամանակամի-
ջոցում և կամ րապնդենք մեր յերկ-
րում անցիալիզմը, կամ մենք չենք
լուծի այն, և այն ժամանակ տեխնի-
կապէս թույլ ու կուլտուրական տե-
սակետից իսպար մեր յերկիրը կկոր-
ցնի իր անկախութիւնը և կդառնա

խմպերի ալիքատական պետութիւններէ
խաղի առարկա :

Մեր յերկիրն այն ժամանակ ասպ-
րում եր՝ ամենասոսկալի սովի չըջան՝
տեխնիկայի բնագավառում : Ին-
դուստրիայի համար սրակասում եյին
մեքենաներ : Մեքենաներ չկային
գյուղատնտեսութեան համար : Մե-
քենաներ չկային տրանսպորտի հա-
մար : Չկար տեխնիկական այն տար-
րական բաղան, առանց վորի աներե-
վակայելի յեր յերկրի ինդուստրիալ
փոխակերպումը : Միմիայն առանձին
նախադրյալներ կային այդպիսի բա-
ղա ստեղծելու համար : Պետք եր ըս-
տեղծել առաջնակարգ ինդուստրիա :
Այդ ինդուստրիան պետք եր ուղղել
դեպի այն կողմը, վոր նա ընդունակ
լիներ տեխնիկայեւ վերակառուցելու

վո՛չ միայն արդյունաբերութիւնը,
այլև գյուղատնտեսութիւնը, այլև
մեր յերկաթուղային տրանսպորտը :
Իսկ դրա համար պետք եր զոհողու-
թիւն անել և ամեն բանում ամենա-
խիստ խնայողութիւն մտցնել, պետք
եր խնայողութիւն անել թե սննդի,
թե դպրոցների, թե մանուֆակտու-
րայի ասպարիզում, վորպեսզի ան-
հրաժեշտ միջոցներ կուտակելինք ին-
դուստրիա ստեղծելու համար : Տեխ-
նիկայի բնագավառում սովը վերաց-
նելու համար այլ ուղի չկար. այդպեւ
ե սովորեցրել մեզ լենինը, և մենք
այդ գործում ընթացել ենք լենինի
հետքերով :

Հատկանալի յե, վոր այդպիսի մեծ
ու դժվարին գործում չեր կարելի
համատարած ու արագ հաջողու-

թյուններ անբասել: Այդպիսի գործում
հաջողությունները կարող են միայն
յերևալ մի քանի տարի անցնելուց
հետո: Ուստի անհրաժեշտ էր զին-
վել ամուր նյարդերով, բոլորակա-
տոկոնությամբ ու համառ համբե-
րությամբ, վորպեսզի հաղթահարե-
լինք առաջին անհաջողությունները և
անշեղորեն առաջ գնայինք դեպի մեծ
նպատակը, թույլ չտալով տատա-
նումներ ու անվստահություն մեր
չարքերում:

Դուք գիտեք, վոր մենք այդ գոր-
ծը հենց այդպես էլ առաջ ենք տա-
լիս: Բայց մեր վոչ բոլոր ընկերները
բավականաչափ նյարդեր, համբերու-
թյուն ու տոկոսություն ունենալին:
Մեր ընկերների մեջ գտնվեցին մար-
դիկ, վորոնք առաջին իսկ դժվարու-

թյունից հետո սկսեցին նահանջի կոչ
անել: Աստվա՛հ, թե «Ով հինը հիշի,
նրա աչքը դուրս դա»: Այդ, իհարկե,
ծիշտ է: Սակայն մարդը հիշողու-
թյուն ունի և մեր աշխատանքի ար-
դյունքներն ամփոփելիս ախմայից
հիշում ես անցյալը (ուրախ աշխուժու-
թյուն դահլիճում): Այդպես ուրեմն՝
մեզ մոտ կային ընկերներ, վորոնք
վախեցան դժվարություններից և ըս-
կեսեցին նահանջի կոչ անել կուսակ-
ցությանը: Նրանք ասում էին. «Մեր
ինչի՞ն են պետք ձեր ինդուստրացու-
մը և կոլեկտիվացումը, մեքենանե-
րը, սև մետալուրգիան, տրակտոր-
ները, կոմբայնները, ավտոմոբիլնե-
րը: Ավելի լավ կլինե՞ր մեզ ավելի շատ
մանուֆակտուրա տալիք, լավ կլի-
ներ ավելի՛ շատ հումք գնե՞լիք լայն

սպառաման առարկաներ արտադրելու։
Համար և ավելի շատ տալիք աղգա-
բնակությանն այն բոլոր մանրուք-
ներից, վորոնցով գեղեցիկ և մարդ-
կանց կենցաղը։ Մեր հետամնացու-
թյան սպամաններում ինդուստրիա,
այն եւ առաջնակարգ ինդուստրիա
ստեղծելը վտանգավոր յերազանք
ե»։


Իհարկե, մենք կարող եյինք այն
3 միլիարդ ոտւրլի վալյուտան, վորը
ձեռք եյինք բերել ամենախիստ խնա-
յողությամբ և ծախսել մեր ինդուս-
տրիան ստեղծելու համար, մենք
կարող եյինք գործադրել այդ գու-
մարը հոսք ներմուծելու և լայն ըս-
տաբան առարկաների արտադրու-
թյունն ուժեղացնելու վրա։ Դա ևս
մի տեսակ «սլան» ե։ Սակայն այդ-

պիտի «սլանով» մենք չեյինք ունենա-
վոչ մետաղաւորութիւն, վոչ մեքենաշի-
նություն, վոչ արահտորներ, վոչ
ավաւոբելիներ, վոչ ել ավաւցիւն,
տանկեր։ Մենք անդեն կլինեյինք ար-
տաքին թշնամիներ ի ստաջ։ Մենք
կթուլացնեյինք սոցիալիզմի հիմքը
մեր յերկրում։ Մենք գերի կլինեյինք
ներքին ու արտաքին բուրժուապի-
ձեռքին։

Պարզ ե, վոր մենք պետք ե ընտ-
րություն կատարեյինք յերկու պլան-
ների միջև՝ նահանջի այն պլանի մի-
ջև, վորը տանում եր, և չեր կարող
չտանել, դեպի սոցիալիզմի սկստու-
թյունը, և հարձակման այն պլանի
միջև, վորը տանում եր և, ինչպես
դիտեք, արդեն հասցրեց մեր յերկ-
րում սոցիալիզմի հաղթանակին։

Մենք ընտրեցինք հարձակման պլանը
 և առաջ գնացինք լենինյան ուղիով,
 հետ մղելով այդ ընկերներին, վոր-
 պես այնպիսի մարդկանց, վորոնք մի
 կերպ տեսնում եյին միայն իրենց
 թի տակ, սակայն աչքերը փակում
 եյին մեր յերկրի մերձավորագույն
 ապագայի հանդեպ, սոցիալիզմի ա-
 պագայի հանդեպ մեր յերկրում:
 Բայց այդ ընկերները միշտ էն,
 վոր սահմանափակվել են քննադա-
 տությամբ և պատիւ դիմադրու-
 թյամբ: Նրանք սպառնում եյին մեզ
 ապստամբություն բարձրացնել կու-
 սակցության մեջ Կենտրոնական Կո-
 միտեյի դեմ: Դեռ ավելին. նրանք մե-
 դանից վոմանց սպառնում եյին զըն-
 դակներով: Ըստ յերևութին՝ նրանք
 հույս ունեյին վախեցնել և հարկա-

դրել մեզ շեղվել լենինյան ուղուց:
 Այդ մարդիկ յերևի մոռացել եյին,
 վոր մենք, բոլշևիկներա, հատուկ
 ձեւվածքի մարդիկ ենք: Նրանք մո-
 ռացել եյին, վոր բոլշևիկներին հետ
 վախեցնի վո'չ դժվարություննե-
 րով, վո'չ ել սպառնալիքներով: Նրանք
 մոռացել եյին, վոր մեզ կոփել և
 մեծ լենինը, մեր առաջնորդը, մեր
 ուսուցիչը, մեր հայրը, վորը յեր-
 կյուղ չգլխեր և յերկյուղ չեր ճանա-
 չում պայքարում: Նրանք մոռացել
 եյին, թե վորքան ուժգին են մոլեգնում
 թշնամիները և վորքան ավելի հիատե-
 ռիկայի մեջ են ընկնում հա-
 կառակորդները կուսակցության ներ-
 սում, այնքան ավելի յեն տաքանում
 բոլշևիկները նոր պայքարի համար և
 այնքան ավելի շեշտակի առաջ են



չարժվում նրանք: Հասկանալի յե,
վոր մենք չենք ել մտածել չեղվել լե-
նինյան ուղուց: Դեռ ավելին. ամբա-
նալով այդ ուղու վրա՝ մենք ել ա-
վելի չեչտակի առաջ դնացինք, դեն
չսրտելով ճանապարհից բոլոր ու ա-
մեն տեսակ խոչընդոտները: Ճիշտ է,
մեզ հարկ յեղավ ճանապարհին մի
քիչ տրորել այդ ընկերներից մի քա-
նիսի կողերը, բայց այդտեղ արդեն
ճար չկա: Պետք է խոստովանել, վոր
յես ել մասնակցել եմ այդ դործին:
(Բուռն ծափեր, «հուռա», բացական-
չություններ):

Այո՛, ընկերներ, մենք վստահ քայ-
լերով ու չեչտակի առաջ ընթացանք
մեր յերկրի ինդուստրացման ու կո-
լեկտիվացման ուղիով, և այժմ արդեն
սկսեք ե անցած համարել այդ ուղին:

Այժմ արդեն բոլորն ել խոստովա-
նում են, վոր մենք վիթխարի հաջո-
ղություններ ենք ձեռք բերել այդ ճա-
նապարհին: Այժմ բոլորն ել խոստո-
վանում են, վոր մենք ունենք ար-
դեն հզոր և առաջնակարգ արդյունա-
բերություն, հզոր մեքենայացված
գյուղատնտեսություն, ծավալվող ու
դեպի վեր բարձրացող տրանսպորտ,
կազմակերպված և հիանալի հան-
դերձված Կարմիր բանակ:

Այդ նշանակում է, վոր մենք հիմ-
նականում արդեն վերացրել ենք սովի
չրժանը տեխնիկայի բնագավառում:

Սակայն վերացելով սովի չրժանը
տեխնիկայի բնագավառում, մենք
թեակոխեցինք մի նոր չրժան, յես
կասեյի՝ սովի չրժանը մարդկանց
բնագավառում, կողերի բնագաւա-

նում, այնպիսի աշխատողների բնա-
դավառում, վորոնք դիտեն թամբել
տեխնիկան և առաջ մղել նրան: Բանն
այն է, վոր մենք ունենք ֆարրիկա-
ներ, գործարաններ, կոլտնտեսու-
թյուններ, խորհրդատեսություններ,
բանակ, ունենք տեխնիկա այդ ամ-
բողջ գործի համար, բայց պակա-
սում են այնպիսի մարդիկ, վորոնք
ունենան բավականաչափ այնպիսի
վորձ, վորն անհրաժեշտ է տեխնի-
կայից քամելու առավելագույն չա-
փով այն, ինչ վոր կարելի յե քամել:
Առաջ մենք ասում եյինք, վոր «Տեխ-
նիկան վորոշոպ է ամեն ինչ»: Այդ
լոգունգը մեզ ոգնեց այն տեսակե-
տից, վոր մենք վերացրինք ասվը
տեխնիկայի բնագավառում և տեխ-
նիկական ամենալայն բազա ստեղ-

ծեցինք գործունեյության բոլոր ճյու-
ղերում՝ մեր մարդկանց առաջնա-
կարգ տեխնիկայով ղինելու համար:
Այդ շատ լավ է: Սակայն դա շատ
և շատ քիչ է: Տեխնիկան չարժման
մեջ դնելու և մինչև վերջն ոգտա-
գործելու համար հարկավոր են
տեխնիկային տիրապետած մարդիկ,
հարկավոր են այնպիսի կադրեր, վո-
րոնք ընդունակ լինեն յուրացնելու և
ոգտագործելու այդ տեխնիկան՝ ար-
վեստի բոլոր կանոններով: Տեխնի-
կան՝ առանց տեխնիկային տիրապե-
տած մարդկանց՝ մեռած է: Այն տեխ-
նիկան, վորին գլխավորում են տեխ-
նիկային տիրապետած մարդիկ, կա-
րող է հրաշքներ գործել և պետք է
գործի: Յեթե մեր առաջնակարգ
ֆարրիկաներում, գործարաններում,

մեր խորհրդանշանաբանություններում ու
կոլտնտեսաբանություններում, մեր Կար-
միր բանակում լինելին բավականա-
չափ աշխարհալի կաղերքեր, վորոնք ըն-
դունակ են թամբել այդ տեխնիկան,
մեր յերկիրը յեռապատիկ ու քառա-
պատիկ ավելի եփեկտ կստանար, քան
ունի այժմ: Ահա թե ինչու այժմ
չէտը պետք է դնել տեխնիկային
տիրապետած մարդկանց վրա, կաղ-
երթի վրա, աշխատողներին վրա: Ահա
թե ինչու այն հին լողունդը, թե՛
«Տեխնիկան վորոչում է ամեն ինչ»,
վորը հանդիսանում է արդեն անցած
շրջանի արտացոլումը, յերբ մեզ մոտ
սով կար տեխնիկայի բնադալառում,
— այժմ պետք է փոխադրինվի նոր լո-
ղունդով, այն լողունդով, թե՛ «Կաղ-

րերը վորոչում են ամեն ինչ»: Այդ
է այժմ գլխավորը:

Կարելի⁶ չե արդյոք ասել, վոր մեր
մարդիկ կատարելապես հասկացել ու
գիտակցել են այդ նոր լողունդի մեծ-
նշանակությունը: Յես այդ չեյի ա-
սի: Հակառակ դեպքում մենք չեյինք
ունենա քիչ աշխատողական վերաբեր-
մունքը դեպի մարդիկ, դեպի կաղ-
րերը, դեպի աշխատողները, վոր
հաճախ տեսնում ենք մեր պրակտի-
կայում: «Կաղերքը վորոչում են ա-
մեն ինչ» լողունդը պահանջում է,
վոր մեր դեկալարներն ամենահոգա-
տար վերաբերմունք ցուցաբերեն դե-
պի մեր աշխատողները՝ «փոքրերը»
և «մեծերը», ինչ բնադալառում էլ
աշխատելիս ղինեն նրանք, ամենցնեն
նրանց խնամքով, ոգնեն նրանց,

յերբ նրանք աջակցության կարիք ունեն, խրախուսեն նրանց, յերբ նրանք ցույց են տալիս առաջին հաջողությունները, առաջ քաշեն նրանց և այլն: Մինչդեռ գործնականում մի շարք դեպքերում մենք նուսենք աշխատողներին նկատմամբ ցուցաբերվող անհոգի, բյուրոկրատիկ և ուղղակի ալլանդակ վերաբերմունքի փաստեր: Հենց դրանով ել իսկապես բացատրվում է այն, Վոր փոխանակ մարդկանց ուսումնասիրելու և ուսումնասիրելուց հետո նրանց պաշտոնի դնելու, հաճախ մարդկանց դես ու դեն են նետում Վորպես պեշկաների: Գնահատել մեքենաները և ուսուցող ստալ, թե Վորքան տեխնիկա ունենք մենք ֆաբրիկաներում և գործարաններում — այդ պայմանները:

Սակայն յես չգիտեմ Վոր մի դեպք, Վորտեղ այնքան ախրով ռապորտ տան, թե քանի մարդ ենք աճեցրել մենք այսօրն ժամանակաշրջանում և ինչպես ենք ոգնել մենք մարդկանց, Վորսրեսդի նրանք աճեն ու կոփվեն աշխատանքի մեջ: Ինչո՞վ է բացատրվում այդ: Այդ բացատրվում է նրանով, որ մեղ մոտ դեռ չեն առվորել գնահատել մարդկանց, գնահատել աշխատողներին, գնահատել կադրերը:

Յես վերհիշում եմ Սիրիլում պատահած մի դեպք, Վորտեղ յես մի ժամանակ աքսորի մեջ եյի: Գործը պատահեց դարնանը, գետերի վարարման ժամանակ: Մոտ 30 հոգի դեպի գետը գնացին՝ բռնելու այն փայտեղենը, Վոր տարել եր գաղա-

դաժ հսկայական պետք : Յերեկոյան
 դեմ նրանք գյուղ վերադարձան ,
 բայց առանց մի ընկերոջ : Այն հար-
 ցին , թե վորտեղ ե յերեսուներորդը ,
 նրանք անտարբեր պատասխանեցին ,
 թե յերեսուներորդն «այնտեղ մնաց» :
 Յերբ յես հարցրի՝ «Ի՞նչպես թե այն-
 տեղ մնաց» ,—նրանք նույն անտար-
 բերությամբ պատասխանեցին . «Նէ
 ի՞նչ ես հարցնում , խեղդվել ե , ելի» :
 Յեվ հենց այդտեղ ել նրանցից մեկն
 սկսեց շտապել ինչ-վոր տեղ գնա-
 լու , հայտարարելով , թե՝ «Պետք ե
 գնալ դամբիկը ջրելու» : Յերբ յես
 կշտամբեցի , թե նրանք անառուին
 ավելի յեն խղճում , քան մարդկանց ,
 նրանցից մեկը մյուսների ընդհանուր
 խորխուստանքով պատասխանեց . «Ին-
 չո՞ւ խնայենք նրանց , այդ մարդ-

կանց : Մենք մարդիկ միշտ կարող
 ենք ստեղծել : Իսկ դամբիկ . . Փոր-
 ձիր դամբիկ ստեղծել» : (Ընդհանուր
 աշխուժություն լրացիւնում) : Ահա
 ձեզ մի շարիս՝ թերես աննշան ,
 բայց շատ բնորոշ : Յես կարծում եմ ,
 վոր մեր մի քանի ղեկավարների ան-
 տարբեր վերաբերմունքը դեպի մար-
 դիկ , դեպի կադրերը և մարդկանց
 զնահատել չիմանալը մնացորդ ե
 մարդկանց կողմից մարդկանց ցույց
 տրվող այն տարրորինակ վերաբեր-
 մունքի , վորը դրսևորվեց հռաւոր
 Սիբիրի իմ նոր պատմած միջադե-
 սպում :

Այդպես ուրեմն , ընկերներ , յեթե
 մենք ուզում ենք հաջողությամբ վե-
 րացնել մարդկանց բնադավառում գո-
 յություն ունեցող սովը և հաանել

այն բանին, վոր մեր յերկիրն ունե-
նա տեխնիկան առաջ շարժելու և
այդ տեխնիկան գործի դնելու ընդու-
նակ բաժականաչափ կադրեր, մենք
պետք է նախ և առաջ սովորենք դնա-
հատել մարդկանց, դնահատել կադ-
րերը, դնահատել այն յուրաքանչյուր
աշխատողին, վորն ընդունակ է ո-
գուտ տալ մեր ընդհանուր գործին:
Պետք է, վերջապես, հասկանալ, վոր
աշխարհում գոյություն ունեցող բո-
լոր արժեքավոր կապիտալներէց ա-
մենաարժեքավոր ու ամենավճռական
կապիտալը մարդիկ են, կադրերը:
Պետք է հասկանալ, վոր մեր ներկա
պայմաններում կադրերը վորոշում
են ամեն ինչ: Յեթե մեզ մոտ լավ
ու բազմաթիվ կադրեր լինեն ար-
դյունաբերության մեջ, գյուղատն-

տեսության մեջ, տրանսպորտում,
բանակում,—մեր յերկիրն անպար-
տելի կլինի: Յեթե չլինեն մեզ մոտ
այդպիսի կադրեր, մենք կկաղանջ
յերկու վոտով:

Ավարտելով իմ ճառը՝ թույլ տվեք
կենաց առաջարկելու Կարմիր բանա-
լի շրջանավարտ մեր ակադեմիա-
կանների առողջության և բարո-
ւության համար:

Հաջողություն եմ ցանկանում նը-
րանց՝ մեր յերկրի պաշտպանության
կազմակերպման ու ղեկավարման գոր-
ծում:

Ընկերներ, դուք ավարտեցիք բարձ-
րագույն դպրոցը և առաջին կոմիւնա-
թությունն ստացաք այդտեղ: Սա-
կայն դպրոցը միայն նախապատ-
րաստական աստիճան է: Կադրերի

խակական կոփվածությունը ձեռք ե
բերվում դպրոցից դուրս կատարվ-
վող կենդանի աշխատանքով, դժվա-
րությունների դեմ սլաքաբերելով,
դժվարությունները հաղթահարելով:
Հիշեցեք, ընկերներ, վոր լավ են
միայն այն կադրերը, վորոնք չեն
վախենում դժվարություններից, վո-
րոնք չեն թաղմովում դժվարություն-
ներից, այլ ընդհակառակը, դնում են
դժվարություններին դեմ-հանդիման՝
դրանք հաղթահարելու ու վերացնե-
լու համար:

Միմիայն դժվարությունների դեմ
մղվող սլաքաբերումն է, վոր կոփվում
են խակական կադրերը: Իսկ յեթե
մեր բանակն ունենա բավականաչափ
խակական, կոփված կադրեր, նա ան-
սլարտելի կլինի:

Ձեր կենացը, ընկերներ: (Բուռն
ծափեր ամբողջ դահլիճում: Բոլորն
եյ վոտֆի յեն կանգնում և բարձրա-
ձայն «Հուռա»-ներով վոդջունում են
ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ):



1870
1871
1872
1873
1874
1875
1876
1877
1878
1879
1880
1881
1882
1883
1884
1885
1886
1887
1888
1889
1890
1891
1892
1893
1894
1895
1896
1897
1898
1899
1900

ՀՀ Ազգային գրադարան



NL0186058

ԳԻՆԸ 20 Կ.

ԿԱԶՄԸ 40 Կ.